ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԻՉԸ
(Հովհաննես Այվազյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Մեծագույն բարեբախտություն է, երբ նվիրյալ անհատը գտնում է իրեն վերապահված արժանի տեղը կյանքում, աշխատանքում: Այդպիսի բախտավորներից է "Հայկական հանրագիտարան. հրատարակչության" գլխավոր խմբագիր-տնօրեն Հովհաննես Այվազյանը, որի բազմահմուտ ղեկավարությամբ ու նվիրումի գնով վերջին տասնամյակներում մեծ ավանդ է ներդրվել հայրենի գիտական և մշակութային կյանքի զարգացման, գիտական ներուժի հարստացման ուղղությամբ: Մեկը մյուսի հետևից հրատարակվել են մեծերին ու փոքրերին հասցեագրված բազմաբնույթ հանրագիտարաններ:

Կարող ենք ասել, որ հանրագիտարաններն անաղմուկ և հաստատուն մտել են մեր էության ու կենսաձևի մեջ, դարձել մեր առօրյայի բաղկացուցիչ մասը: Որքան մտովի կտուժեինք և որքան դժվարություններ կկրեինք, եթե ձեռքի տակ չունենայինք իմացության այդ հզոր աղբյուրները:

Հայ ժողովուրդն ունեցել է մշակութային մտքի փայլատակումներ, որոնք էական հետք են թողել զարգացման ընթացքի վրա, ինչպես՝ պատմահայր Մովսես Խորենացու "Հայոց պատմությունը", Անանիա Շիրակացու "Աշխարհացույցը", ոսկեդարյան Զվարթնոցը, Աղթամարի հրաշք եկեղեցին, Գրիգոր Նարեկացու "Մատյանը", "Սասնա ծռեր" դյուցազներգությունը, Խաչատուր Աբովյանի "Վերքը", Նոր հայկական, Արմատական բառարանները և այլն: Հայոց ազգային հանրագիտարանների ծնունդն այդ փայլատակումների օրգանական շարունակությունն է, օրինաչափ ու սպասելի դրսևորումը: Փառք ու պատիվ Հովհ. Այվազյանին և բոլոր նրանց, ում ջանքերով, տքնությամբ ու նվիրումի գնով հնարավոր է դառնում իրականացնել մեր ազգային հպարտությունը կազմող այդ աննախադեպ իրողությունները:

Հովհ. Այվազյանն արդեն շուրջ 40 տարի է աշխատում է "Հայկական հանրագիտարան. հրատարակչությունում": Հանրագիտարան եկել է 1979-ին ՀԽՍՀ ԳԱ փորձառական կենսաբանության ինստիտուտից, երբ քիմիական գիտությունների թեկնածու էր, կրտսեր գիտաշխատող: Ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանը նրան զրույցի ժամանակ ասել է. "Հանրագիտարանում դու այլևս գիտությամբ զբաղվելու հնարավորություն չես ունենա, լուրջ ընտրություն պիտի անես գնալուց առաջ":

Չնայած դա բացահայտ զգուշացում էր, բայց Այվազյանը շատ ավելի ուշ հասկացավ դրա բուն էությունը, երբ իր համար վերջնականապես բացահայտեց հանրագիտարանի՝ չափից ավելի "խանդոտ" բնավորությունը. "Այդ բանը ես ավելի ուշ հասկացա, երբ փոքրիշատե խորացա հանրագիտարանի խմբագրի բազմանշանակ ու բազմախորհուրդ մասնագիտության նրբությունների մեջ":

Նրան առաջարկվել էր գլխավոր խմբագրի տեղակալի պաշտոն, որը ոչ միայն լուրջ ու պատասխանատու, այլև դժվարհասանելի պաշտոն էր այն ժամանակ հանրագիտարանի նման չափից ավելի հեղինակավոր հաստատության համար:

ՀՍՀ 5-րդ հատորը եղավ առաջին փորձաքարը, որը պիտի հաղթահարեր բնական և ճշգրիտ գիտությունների գծով գլխավոր խմբագրի տեղակալը, դրան, բնականաբար, հաջորդեցին 6–12 և 1 լրացուցիչ հատորները:

Այդ տարիները՝ 1980–1987 թթ., Այվազյանի հիշողության մեջ տպավորվել են որպես զարմանալի վերելքի ու նվիրումի տարիներ. Հանրագիտարանի գլխավոր խմբագրությանը կից ձևավորվել էին 35-ից ավելի մասնագիտական խորհուրդներ, որոնք ղեկավարում էին համապատասխան ոլորտների ամենաճանաչված մասնագետները, ովքեր համակարգում էին բազմաբնույթ հոդվածների ընտրությունն ու դրանց պատրաստման և գիտախմբագրական պատշաճ մակարդակի ապահովման աշխատանքները: Գործին նվիրված էր ոչ միայն հանրապետության ակադեմիական ու բուհական մտավորականության սերուցքը, այլև՝ սփյուռքահայ և արտասահմանյան մի շարք ճանաչված գիտնականներ: Այդ ժամանակները, կարելի է ասել, փորձառության մեծ դարբնոց էին հանրագիտարանի ողջ անձնակազմի և հատկապես Այվազյանի համար, որին բախտ վիճակվեց անձամբ աշխատելու ճշգրիտ ու բնական գիտությունների դաշտի բազմաթիվ անվանի մտավորականների հետ, մոտիկից ծանոթանալու ճանաչված հայագետների, պատմաբանների, բանասերների և ուրիշների, ինչը նրան շատ օգնեց հետագա աշխատանքներում: Բարձրակարգ խմբագիրների ու հրատարակչական գործի մասնագետների ջանքերով ստեղծվեց աննախադեպ կոթողային մի հրատարակություն՝ "Հայկական սովետական հանրագիտարան" բազմահատորյակը, որը վաղուց արդեն իր արժանի տեղն է գրավել հայ գրավոր մշակույթի գանձարանում և 1988-ին արժևորվել է Հանրապետության պետական մրցանակով:

Հրատարակչության աշխատանքում որակապես նոր փուլ է սկսվում 1990-ական թվականների սկզբից, երբ անցում է կատարում թեմատիկ հանրագիտարանների հրատարակմանը: Այդ շրջանում ոչ միայն պետք էր մշակել ու հաղթահարել նոր հանրագիտարանների առանձնահատկությամբ պայմանավորված դժվարությունները, այլև դիմակայել սկսվող տնտեսական ու էներգետիկ ճգնաժամին: Սակայն, մեծ դժվարությամբ, աշխատակազմի համառության և արդեն գլխավոր խմբագիր դարձած Հովի. Այվազյանի ջանքերով պահպանվեց հաստատության պետական կարգա-

վիճակը: Հակառակ դեպքում դժվար է ասել, թե ինչ ճակատագրի կարժանանար հրատարակչությունը:

Մեծ կորստի (հրատարակչության ճարտարապետական նշանակության շենքից զրկվելու) գնով հաջողվեց պահպանել այն, և աստիճանաբար վերականգնվեցին քիչ թե շատ նորմալ աշխատանքային պայմանները: Դրա արդյունքն արդեն տպագրված 12 անուն հանրագիտարաններն են [18 հատորով՝ "Հայկական համառոտ" (3–4-րդ - հատորներ, 1999–2003), "Տնային տնտեսության" (1997), "Հանրամատչելի բժշկական" (2001), "Հայաստանի բնաշխարհ" (2002), "Քրիստոնյա Հայաստան" (2002), "Հայ Սփյուռք" (2003), "Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988–1994" (2005–2007), "դպրոցական մեծ" (քառհատոր, 2007–2010), "Ով ով է. հայեր" կենսագրական (երկհատոր, 2005–2007), "Հայաստան" (2012), "Գյուղատնտեսական" (2015), "Հայ գրատպության և գրքարվեստի" (2015) հանրագիտարանները] և ստվարածավալ "Հանրագիտական բառարանի" 1-ին հատորը, որի 2-րդ հատորը, ինչպես նաև "Հայկական երաժշտական հանրագիտարանը", շուտով կուղարկվեն տպագրության: Դա մեծ արդյունավետություն է եղած ֆինանսական սուղ միջոցների և բավական սահմանափակ մասնագետ կադրերի պայմաններում:

Նախապատրաստության ընթացքում է "Հովհաննես Թումանյան հանրագիտարանը", որին մասնակցում են հանրապետության գրեթե այն բոլոր մասնագետները, որոնք երբևէ զբաղվել են Ամենայն հայոց բանաստեղծի ստեղծագործություններով ու գործունեությամբ: Շատ կարևոր է, որ գլխավոր խմբագիրն ինքը "Թումանյան հանրագիտարանը" համարի հաստատության հերթական լուրջ փորձությունը և վճռական լինի առավելագույնն անելու՝ մեծ բանաստեղծի ծննդյան 150-ամյակին արժանի հանրագիտարան ստեղծելու համար:

Հանրագիտարանի գլխավոր խմբագիր-տնօրենը հրատարակչական բոլոր գործընթացների բազմահմուտ գիտակ է, խելամիտ ու բանիմաց, նրա "ձեռքի տակով" է անցնում հանրագիտարանի յուրաքանչյուր հոդված՝ խանձարուրից մինչև ավարտը: Հոդվածներ կազմել, խմբագրել, սրբագրել, ձևավորել, պատկերազարդել… ամենը հարազատ է նրա էությանը և գործելակերպին՝ ի բարեբախտություն հայ հանրագիտական մտքի զարգացման, հայ մշակույթի ու մշակութային գործիչների, որոնք ներկայացված են խորիմացությամբ, բարձր արվեստով և պատշաճ մակարդակով:

Այվազյան գործչի ամենաբնութագրական հատկանիշներն են հայրենասիրությունը և իր "կյանքի գործին" անմնացորդ նվիրումը, որի շնորհիվ հրատարակչությունը, չնայած վերջին տարիների դժվարություններին, անխաթար շարունակում է իր ազգանվեր-արգասաբեր երթը:

Բնական է, որ Այվազյանը չի սահմանափակվել միայն հանրագիտարանի շրջանակով: Այդ տարիների ընթացքում նա հասցրեց պաշտպանել դոկտորական ատենախոսություն՝ Հայկական քիմիական անվանակարգության բարեփոխման թեմայով,

ապա՝ տպագրել 7 ծավալուն գիրք, որոնցից յուրաքանչյուրը լուրջ գիտական ուսումնասիրություն է:

Գրքերից 3-ը ("Հաղթանակած բանակի գեներալը"՝ 2001, "Հաղթանակի ու վերհուշի ճամփաներով"՝ 2006, և "Հաղթելու արվեստը"՝ 2011) նվիրված են Ղարաբաղյան ազատագրական պատերազմին ու այդ պատերազմում Հանրապետության 1-ին գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի հայրենանվեր գործունեությանը: Այվազյանն իր գրքի հերոսի հետ նախանձելի բարեկամություն էր անում, ինչը, առանց չափազանցության, ծառայեցվեց հայրենասիրական և հայրենակցական լուրջ իրողությունների:

Պետք է կարևորել հատկապես Այվազյանի "Զորավար Անդրանիկ և Հովհաննես Թումանյան" մենագրությունը, որը գիտավավերական ու գիտագեղարվեստական աշխատության յուրօրինակ տեսակ է: Բազմաթիվ արխիվային փաստերով ու պատմագիտական հարուստ նյութի հենքի վրա կառուցվել է իսկական գեղարվեստական մի պատում՝ հայ ժողովրդի 2 մեծերի՝ Զորավար Անդրանիկի և Ամենայն հայոց բանաստեղծի մասին՝ հայոց պատմության դժվարագույն ժամանակահատվածում՝ 1914–1919 թվականներին: Ընթերցողը գրքում չի կարող չնկատել այդ երկու մեծ հայերի արյան զարկերակների նույն ռիթմը, սրտի նույն բաբախյունը, մտահոգությունը, քաղաքական նույն համոզվածությունը՝ այն դեպքում, երբ մեկը ֆիդայի զինվորական է, իսկ մյուսը՝ ազգի տառապյալ – գրչի մարդ:

Այվազյանի "Մի հայտնագործության պատմություն" (2007) գիրքը գիտական էթիկայի մասին է, որը հաճախ հանիրավի մոռացության է տրվում, բայց կարող է նաև ճակատագրական լինել, ինչպես տվյալ դեպքում: Հետաքրքրական է, որ այդ թեմային հեղինակն անդրադարձել է նաև "Օրերի անձանձիր հոլովույթում" (2015) գրքի "Գուրգեն Ասկարյան" հոդվածում, որի իրադարձությունները ծավալվում են արդեն մոսկովյան իրականության պայմաններում՝ իբրև թիրախ ունենալով ճշմարտության համար մաքառող ֆիզիկոս Ասկարյանին: Այդ գրքում զետեղված է նաև Հրանտ Դինքի մասին ծավալուն մի ուսումնասիրություն՝ հայտնի ազգային գործչի գործունեության համակողմանի վերլուծությամբ:

Հեղինակի "Հարսանիքը" գեղարվեստական գործ է՝ բաղկացած 2 նովելից, որոնց հերոսները մեր օրերի մարդիկ են՝ իրենց առօրեական հոգսերով ու երբեմն անսպասելի ճակատագրերով: Այստեղ մենք արդեն կարող ենք տեսնել գրող Այվազյանին՝ իր գեղարվեստական մտածողությամբ և պատկերավոր խոսքի դրսևորումներով:

Խոր, բովանդակալից և ընդգրկուն է վերջերս հրատարակած Այվազյանի "Օրերի անձանձիր հոլովույթում" խոսուն վերնագրով ժողովածուն: Դրանում Այվազյանի՝ տարբեր ժամանակներում և տարբեր իրադրություններում անդրադարձներն ու ելույթներն են, որոնք վերաբերում են մեր ժողովրդի ապրած ողբերգական և լուսավոր էջերին, մշակույթին, գիտության, արվեստի ու գրական գործիչներին: Ներկայացված

են հեղինակի մտքի և իմացության թռիչքով, մտերմիկ, սրտացավ, ջերմագին սիրով՝ հայրենի ստեղծագործությունների ու դրանց ստեղծողների նկատմամբ:

Այվազյանը, լինելով ակտիվ քաղաքացի, օժտված կազմակերպչական լուրջ կարողություններով, ծավալել է նաև լայն հասարակական գործունեություն: Դա հատկապես դրսևորվեց ազգային վերելքի տարիներին՝ կապված 1990-ական թվականների սկզբին մեր ազգային զարթոնքի առանձին դրսևորումների հետ: Այդ տարիներին հարկ եղավ հիմնադրել "Ջավախք" հայրենակցական միությունը, որի նախագահ շատ չանցած ընտրվեց Այվազյանը և այդ պարտականությունը կատարեց շուրջ 14 տարի:

Միության ջանքերով, մասնավորապես, պատրաստվեցին և Ջավախքում տեղադրվեցին Ջիվանու կիսանդրին (Կարծախում) և Կարապետ Բագրատունի սրբազանի արձանը (Ախալքալաքի եկեղեցու բակում): Իսկ վերջերս Այվազյանը Ջավախքին աջակցության հիմնադրամի կառուցած Ջիվանու տուն-թանգարանին նվիրեց իր՝ խնամքով պահպանած աշուղի կիսանդրու նախօրինակը և միության "Ասպնջակ" թերթի ամբողջ մի լրակազմ:

Հովհ. Այվազյանի հասարակական գործունեության մի յուրահատուկ ոլորտ է նաև ԱՕԿՍ-ը, որի Հայաստան–Բուլղարիա ընկերության փոխնախագահը լինելով, իր լուրջ նպաստն է բերել այդ ընկերության աշխատանքին:

Դառնանք մեր այսօրվա խնդիրներին. վերջին տասնամյակներում երկրում կատարվող քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ փոփոխություններ հանրագիտական մտածողության, հանրագիտարանային արժեքների վերանայման ու վերագնահատման պահանջ են առաջադրում: Այսօր հանրագիտական մտածողությունը, հասկանալիորեն, պիտի սրբագրի եղած բոլոր հանրագիտական հրատարակություններն ու միատեղի նաև վերջին շրջանի մեր ձեռքբերումները: Հասկանալի է նաև, որ այդօրինակ հիմնարար հրատարակություն կարող է իրականացվել միայն լուրջ ֆինանսական միջոցներով ու ազգային հավաք մտավորականության ուժերով: Օրախնդիր է նաև օտար լեզուներով հանրագիտարան ունենալը:

ՀՀ ԳԱԱ-ն այս խնդիրները վաղուց արդեն հայտարարել է առաջնահերթություն, և հուսանք, որ շուտով կստեղծվեն նաև համապատասխան ֆինանսական միջոցներ ու "Հայկական հանրագիտարան. հրատարակչությունը", իր բազմավաստակ գլխավոր խմբագրի ղեկավարությամբ, ձեռնամուխ կլինի նոր ազգային հանրագիտարանի հրատարակմանը:

ԳԱՌՆԻԿ ՇԱԽԿՅԱՆ